

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական
խորհրդի 2013թվականի հունիսի 25-ի նիստի
(արձանագրություն N11)

Լսելով և քննարկելով «Մանկավարժություն առարկայի դասավանդման հետազոտարևի փոխումների մասին» հարցը (զեկուցող՝ Հեղինե Խաչատրյան) գիտական խորհուրդը որոշում է.

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժություն առարկայի դասավանդման հետազոտարևի փոխումների մասին զեկուցումը ընդունել ի գիտություն:
2. Ելնելով բարձրագույն կրթության բարեփոխումների անհրաժեշտությունից, հիմք ընդունելով մանկավարժական համալսարանի ռազմավարական պլանի առաջնահերթությունները, նկատի ունենալով մանկավարժական ցիկլի առարկաների առանցքային դերն ու նշանակությունը բարձրագույն մասնագիտական կրթության համար,

հանձնարարել՝

ա) մանկավարժության պատմության և տեսության ամբիոնին և մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնին մինչև 2013թ. օգոստոսի 26-ը կանոնակարգել մանկավարժական ցիկլի առարկաների ցանկը, բարելավել, մշակել և ներկայացնել մանկավարժական դասընթացների ծրագրերն ու առարկայական նկարագրերը, ուսումնամեթոդական փաթեթները՝ դրանք համապատասխանեցնելով կրթական ծրագրերի կարիքներին ու վերջնարդյունքներին, մանկավարժական գիտության ու պրակտիկայի ժամանակակից մոտեցումներին,

բ) համալսարանի պրակտիկայի վարչությանը, մանկավարժության տեսության և պատմության ամբիոնին, մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնին՝ մինչև 2013թ. օգոստոսի 26-ը լրամշակել ԲԿԾ մանկավարժական պրակտիկայի և ՄԿԾ գիտամանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերը և ուսումնամեթոդական փաթեթները՝

- համապատասխանեցնելով մանկավարժական տեսական ու գործնական դասընթացների և պրակտիկայի բովանդակությունն ու պահանջները,

- հստակեցնելով մանկավարժական կոմպետենցիաներն ու վերջնարդյունքները,

- սահմանելով պրակտիկայի ղեկավար- մանկավարժի հստակ գործառույթները:

3. Հանձնարարել համալսարանի ուսումնամեթոդական վարչության պետ, պրոռեկտոր Սիեր Մելիք-Բախշյանին 2013-2014 ուս. տարվա ուսումնական պլաններում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

4. Հավանություն տալ ժամանակակից մանկավարժական բարձրագույն դպրոցի դիդակտիկայի և կրթության որակի հիմնախնդիրների գիտական հետազոտությունների լաբորատորիա ստեղծելու գաղափարին և հանձնարարել համալսարանի գիտահետազոտական կենտրոնին, մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնին գործնական քայլեր կատարել դրա ստեղծման ուղղությամբ:

ՌԵԿՏՈՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ